

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արագածոտնի մարզի Թալին համայնքի Եղնիկ բնակավայրում տեղի ունեցած հանրային լսում «ՄԵՐՈՒԺ ԵՎ ԷԼԵՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Արագածոտնի մարզի Եղնիկի հանքավայրի Հարավային երկրորդ և երրորդ տեղամասերում նախատեսվող օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ

27.12.2024թ

Եղնիկ բնակավայր

ՕՐԱԿԱՐԳ: «ՄԵՐՈՒԺ ԵՎ ԷԼԵՆ» ՍՊԸ-ն նախատեսում է Արագածոտնի մարզի Եղնիկի հանքավայրի Հարավային երկրորդ և երրորդ տեղամասերում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրություն իրականացնել Արագածոտնի մարզի Թալին համայնքի Եղնիկ բնակավայրի վարչական տարածքում:

Հանրային լսմանը մասնակցում էին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ Գոհար Մինասյանը, Արագածոտնի մարզի Եղնիկ բնակավայրի վարչական ղեկավար՝ Տարոն Սարգսյանը, Արագածոտնի մարզի Շղարշիկ բնակավայրի վարչական ղեկավար Արաբո Հարությունյանը: Թալին համայնքի գյուղատնտեսության բնապահպանության բաժնի պետ՝ Գագիկ Միրզախանյանը: Նախաձեռնող՝ Գեղամ Ղազարյանը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (03.05.2024թ. ՀՕ-150-Ն) համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 28

դեկտեմբերի 2023 թվականի N2343-Ն որոշմամբ սահմանված կարգով 2024թ. դեկտեմբերի 27-ին ժամը 12:00-ին Արագածոտնի մարզի Թալին համայնքի Եղնիկ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «ՄԵՐՈՒԺ ԵՎ ԷԼԵՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արագածոտնի մարզի Եղնիկի հանքավայրի Հարավային երկրորդ և երրորդ տեղամասերում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ երկրորդ հանրային լսումը:

Հանրային լսումը վարեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Գոհար Մինասյանը, ով հանդես եկավ բացման խոսքով ներկայացրեց փորձաքննական գործընթացը և կատարված աշխատանքները:

Ներկայացվեց, որ համաձայն Օրենքի նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Հաշվետվությունն Օրենքով սահմանված կարգով ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներին և տարբեր գերատեսչություններին կարծիքներ ստանալու նպատակով: Փորձաքննության իրականացման արդյունքում

